ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

2023

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դիզայնը՝
«Դիմարկ» ՍՊԸ

Բովանդակություն

Կազմակերպության մասին	3
Ազատազրկված անձինք ունեն ինքնադրսևորվելու հնարավորություն	4
Կազմակերպությունը մասնակցել է դատապարտյալների կողմից կազմակերպված միջոցառումների	7
Հաշվետու տարին նշանավորվել է 2 կարևոր կոնֆերանսի կազմակերպմամբ	8
Ամրապնդվել է համագործակցությունը պետական կառույցների հետ	12
Ընդլայնվել է հանրային քննարկումների շրջանակը	15
Կազմակերպությունը նպաստել է պետական կառույցների միջև համագործակցությանը	18
Ամրապնդվել է համագործակցությունը կրթական հաստատությունների հետ	18
Հրապարակվել է քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բուժաշխատողների համար նախատեսված ձեռնարկը	21
Ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքները ներկայացվել են ամանորյա տոնավաճառում	23
Ամրապնդվել է լրատվամիջոցների հետ համագործակցությունը	25

Կազմակերպության մասին

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2017 թվականին:

Կազմակերպության գործունեության առանցքում ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունն է: Այս համատեքստում Կազմակերպության կողմից իրականացված ծրագրերն ուղղված են եղել ազատազրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրների, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացման խոչընդոտների, քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումների, համավարակի պայմաններում պրոբացիայի կին շահառուների և ազատազրկված կանանց կարիքների ուսումնասիրությանը:

Իրականացված ծրագրերը միտված են եղել նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների, հոգեբանների և բուժանձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացմանը, ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների տնտեսական հզորացմանը, ստեղծագործական ներուժի զարգացմանը և աշխատանքային հմտությունների բարելավմանը, նրանց նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխությանը:

Կազմակերպությունը զբաղվում է նաև քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության մշակման և ներդրման, ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակներին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման ջատագովությամբ:

Ազատազրկված անձինք ունեն ինքնադրսևորվելու հնարավորություն

Հաշվետու տարում Կազմակերպությունն ամրապնդել է ազատազրկված անձանց հետ աշխատանքը: Նրանք մասնակցել են Կազմակերպության կողմից իրականացված տարբեր նախաձեռնությունների, այդ թվում՝ ամանորյա տոնովաճառին, ինչն արտացոլվել է նրանց անձնական գործերում և դիտարկվել պայմանական վաղաժամկետ ազատման, անվտանգային գոտիների կամ դրանց պայմանների փոփոխման, խրախուսանք տրամադրելու հետ կապված և այլ հարցեր քննարկելիս:

«Արմավիր» ՔԿՀ-ում ազատազրկման ձևով պատիժ կրող 2 և ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող 6 դատապարտյալ հեռավար տարբերակով, իսկ «Վարդաշեն» ՔԿՀ-ում ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող 1 դատապարտյալ մասնակցել են 2023 թվականի փետրվարի 14-ին տեղի ունեցած «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով կոնֆերանսին:

«Արմավիր» ՔԿՀ-ում պատիժ կրող դատապարտյալների հեռավար մասնակցությունը կոնֆերանսին աննախադեպ էր Հայաստանի բանտային պատմության մեջ:

- «Ուզեք-չուզեք, մենք հասարակության մասն ենք. դատապարտյալները տեսաուղերձով դիմեցին»
- «Պատժողական քաղաքականությանը փոխարինելու է եկել վերասոցիալականացումը»

1 նախկին ցմահ դատապարտյալի, «Աբովյան», «Արմավիր», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների 2 կին և 7 տղամարդ (նրանցից 6-ը ցմահ դատապարտյալներ են) և 1 կալանավորված անչափահաս տղայի ձեռքի աշխատանքները ներկայացվել են ամանորյա տոնավաճառում:

«Արմավիր», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում ազատազրկման և ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող մի շարք դատապարտյալների 12 հոդված և այլ նյութեր հրապարակվել են Կազմակերպության կայքի «Նորություններ» և «Հոդվածաշար» ենթաբաժիններում: Դրանք վերաբերել են հիմնարկներում կազմակերպված տարաբնույթ միջոցառումներին, ստեղծագործական աշխատանքով զբաղվելու հնարավորություններին, ինքնագործ միավորումների դերին, պատժի կրմանը և պայմանական վաղաժամկետ ազատմանն առնչվող խնդիրների:

- «Ամերիկացին»՝ «Արմավիր» ՔԿՀ-ում
- «Ազգայինը՝ միշտ արդիական». Հերթական միջոցառումը «Արմավիր» ՔԿՀ-ում
- «Զրկանքի թախիծ և ապագայի հանդեպ հավատ՝ ճաղերից այն կողմ»
- «Ես հայ եմ և մասնիկն եմ իմ հայրենիքի» խորագրով միջոցառում «Արմավիր» ՔԿՀ-ում
- «Արմավիր» ՔԿՀ-ում դատապարտյալներն ապրում են մշակութային շնչով
- Հատուկ դիպլոմներ՝ «Ներդաշնակության զգացման և գեղեցիկի հանդեպ սիրո համար» անվանակարգում
- «Մեզ թրծում է Կյանքը, մենք թրծում ենք Կավը»
- «Ձայն հատակից կամ խնդիրներով լիքը մեր հայրենիքը». «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալներ
- Ինքնագործ միավորումների դերը դատապարտյալների կյանքում
- Պատիժ է կրում նաև դատապարտյալի ընտանիքը. հետազոտության արդյունքներ
- Ցմահ ազատազրկվածների մտահոգությունները և առաջարկները ՀՀ կառավարությանը
- Հացադուլ հայտարարած ցմահ ազատազրկման դատապարտված անձանց բաց նամակը՝ ուղղված հասարակությանը և իշխանություններին

Կազմակերպությունը մասնակցել է դատապարտյալների կողմից կազմակերպված միջոցառումների

Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնի և դատապարտյալների ինքնագործ մշակութային միավորումների նախաձեռնությամբ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աջակցությամբ տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել քրեակատարողական հիմնարկներում, որոնցից 4-ին մասնակցել է Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը:

Այդ միջոցառումների շնորհիվ քրեակատարողական հիմնարկներում ստեղծվել է այնպիսի մթնոլորտ, որ ազատազրկված անձինք կարողանան իրենց ունակությունները ցույց տալ և փոխանցել այլոց: Մտահղացումներն իրականացնելը դատապարտյալների համար արդյունավետ զբաղվածություն է ապահովում, զերծ է պահում բացասական ազդեցություններից, հետագայում դրական է անդրադառնում պայմանական վաղաժամկետ ազատման, անվտանգության գոտիների կամ դրանց պայմանների փոփոխման, խրախուսանքի արժանանալու վրա:

Դա նաև նպաստում է, որպեսզի ազատազրկված անձինք հնարավորինս մոտ լինեն հասարակությանը, իսկ հասարակության կարծրատիպերը քրեակատարողական հիմնարկների և այնտեղ պահվող անձանց մասին փոխվեն:

«Արմավիր» ՔԿՀ	«Սևան» ՔԿՀ
«Ես հայ եմ և մասնիկն եմ իմ հայրենիքի»	«Հավերժի ճամփորդ Հայաստանս»
«Ազգային թատրոն և բեմարվեստի հիմունքներ. թատերականացված միջոցառում»	«Գեղեցկությունը կփրկի աշխարհը»

Հաշվետու տարին նշանավորվել է 2 կարևոր կոնֆերանսի կազմակերպմամբ

Ազատազրկված անձինք ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում խոցելի են համավարակի նկատմամբ, քանի որ քրեակատարողական հիմնարկներում վարակի բռնկման և տարածման հավանականությունն ավելի մեծ է: Համավարակի ներթափանցմանը և տարածմանը նպաստում են վերջիններիս սանիտարահիգիենիկ և կենցաղային ոչ բավարար պայմանները, ազատազրկված անձանց թույլ իմունային համակարգը, առողջապահական ծառայությունների տրամադրման հապաղումը, սոցիալական հեռավորության պահպանման անհնարինությունը, անձնական տարածքի բացակայությունը, գերբնակեցումը և այլն:

Ազատազրկված անձանց շրջանում համավարակի նկատմամբ առավել խոցելի են կանայք, քանի որ կիրառված սահմանափակումները հանգեցրել են նրանց կարիքների կրկնակի անտեսմանը: Անբարենպաստ վիճակում են հայտնվել նաև այն կանայք, ովքեր ազատ են արձակվել քրեակատարողական հիմնարկից կամ պատիժ են կրել Պրոբացիայի ծառայությունում, քանի որ գործազրկությանն ավելացել է խտրականության և բռնության ենթարկվելու հավանականությունը:

2023 թվականի հունվարի 31-ին տեղի ունեցավ «Քրեական արդարադատության համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն հակազդում. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով կոնֆերանսը:

Կոնֆերանսի նպատակն էր խթանել միջազգային, պետական և տեղական կառույցների համատեղ ջանքերի ներդրումը քրեական արդարադատության համակարգում համավարակին գենդերազգայուն հակազդման մեխանիզմների ներդրման համատեքստում՝ նպաստելով պատժի դատապարտված և կալանավորված կանանց իրավունքների պաշտպանությանը և նրանց վիճակի բարելավմանը:

Կոնֆերանսին մասնակցել են ներկայացուցիչներ դեսպանատներից, միջազգային կառույցներից, պաշտոնյաներ Արդարադատության նախարարությունից, Պրոբացիայի և Քրեակատարողական ծառայություններից, Քրեակատարողական բժշկության կենտրոնից, Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, Գլխավոր դատախազության Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունից, ներկայացուցիչներ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրից, ՄԱԿ-ի ԱՀԿ հայաստանյան գրասենյակից, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնից, Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնից, ոլորտային հասարակական կազմակերպություններից, լրատվամիջոցներից և շահագրգիռ այլ կառույցներից:

✓ «Քրեական արդարադատության համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն հակազդում». Կոնֆերանսի ամփոփում

Կոնֆերանսը լուսաբանել են Epress.am-ը և Ալիք Մեդիան: Factor TV-ն այն հեռարձակել է ուղիղ եթերով, իսկ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր»-ը ռեպորտաժ է պատրաստել:

✓ «Ոնց են կալանավորված կանայք վերապրել կորոնավիրուսը»

✓ «Ի՞նչ խնդիրների են բախվում կին կալանավորները»

▶ «Քրեական արդարադատության համակարգում COVID-19 համավարակին հակազդում». ՈՒՂԻՂ

▶ «Ինչպես են ՔԿՀ-ները հակազդել ՔՈՎԻԴ-19-ին. ուսումնասիրություն»

Ազատազրկված անձանց կրթության իրավունքն ամրագրված է քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ: Կրթությունը նաև ազատազրկված անձանց վերասոցիալականացման կարևոր բաղադրիչներից է: Մինչդեռ ազատազրկված անձանց կրթության իրավունքն արդյունավետ ձևով չի իրացվում, ինչը կապված է օրենսդրական, պրակտիկ և մի շարք այլ խնդիրների հետ: Դա ոչ միայն հանգեցնում է ազատազրկված անձանց կրթության իրավունքի խախտմանը, այլև խաթարում է նրանց վերասոցիալականացման գործընթացը՝ մեծացնելով կրկնահանցագործություն կատարելու ռիսկերը:

2023 թվականի փետրվարի 14-ին տեղի ունեցավ «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով կոնֆերանսը:

Նպատակն էր խթանել միջազգային, պետական և տեղական կառույցների համատեղ ջանքերի ներդրումն ազատազրկված անձանց կրթության կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև նպաստել, որպեսզի պատասխանատու պաշտոնյաները դիրքորոշում արտահայտեն բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ և պարտավորություն ստանձնեն դրանց կարգավորման ուղղությամբ:

Կոնֆերանսը բազմամարդ էր: Մասնակցել են 60-ից ավել ներկայացուցիչներ Հայաստանում դիվանագիտական առաքելություններից, պետական կառույցներից, տեղական և միջազգային կազմակերպություններից, Արդարադատության նախարարությունից, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնից,

8 քրեակատարողական հիմնարկից, Պրոբացիայի ծառայությունից, Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնից, Միասնական սոցիալական ծառայությունից, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանից, Եվրասիա միջազգային համալսարանից, Երևանի «Հայբուսակ» համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Եվրասիա համագործակցություն հիմնադրամից, այլ հասարակական կազմակերպություններից և լրատվամիջոցներից: Շահառու խմբերից մասնակցել են «Արմավիր» ՔԿՀ-ում ազատազրկման և ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող 6 դատապարտյալ (հեռավար) և «Վարդաշեն» ՔԿՀ-ում ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող 1 դատապարտյալ:

«Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ». Կոնֆերանսի ամփոփում

Կոնֆերանսը լուսաբանել են «Հետք»-ը, Հանրային ռադիոն, ռեպորտաժներ են պատրաստել FreeNews-ը, Հ1-ի Լուրեր-ը, իսկ Factor TV-ն հեռարձակել է ուղիղ եթերով:

- «Ազատազրկված անձանց մեջ կան մարդիկ, որոնք նույնիսկ տառաճանաչ չեն»
- «Կրթությունը՝ քրեակատարողական հիմնարկի պատերից ներս. ի՞նչ կարող է սովորել բանտարկյալը»
- «Քրեակատարողական հիմնարկներում կրթության խնդիրներն ու առաջարկվող լուծումները»
- «Անկախացումից ի վեր 11 դատապարտյալ է բարձրագույն կրթություն ստացել»
- «Կրթությունը ՔԿՀ-ներում. մարտահրավերներ և հեռանկարներ». ՈՒՂԻՂ

Ամրապնդվել է համագործակցությունը պետական կառույցների հետ

Կազմակերպության կողմից իրականացող ծրագրերը համահունչ են Արդարադատության նախարարության առաջնահերթություններին, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի զարգացման ռազմավարական ուղղություններին: Այդ համատեքստում Կազմակերպության կողմից արձանագրված խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններն ուղղորդող նշանակություն ունեն Արդարադատության նախարարության համար: Կազմակերպության հետ համագործակցությունն առաջնահերթ է դիտարկվում, ինչի շնորհիվ պատասխանատու պաշտոնյաները պատրաստակամորեն աջակցել են Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերին և նախաձեռնություններին:

Հաշվետու տարում կազմակերպվել է 2 կոնֆերանս, 2 փակ աշխատանքային քննարկում և 4 հանրային քննարկում, որոնց մասնակցել են 30 ներկայացուցիչ Արդարադատության նախարարությունից, Պրոբացիայի ծառայությունից, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնից և քրեակատարողական հիմնարկներից, Քրեակատարողական բժշկության կենտրոնից, Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից և Գլխավոր դատախազությունից:

Դա օգնել է քաղաքականություն մշակողների և որոշում կայացնողների վրա հանրային ազդեցություն գործել, նպաստել է, որպեսզի պատասխանատու պաշտոնյաները դիրքորոշում արտահայտեն բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ և պարտավորություն ստանձնեն դրանց կարգավորման ուղղությամբ:

2
ԿՈՆՖԵՐԱՆՍ

2
ՓԱԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ

4
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

✓ «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ». Կոնֆերանսի ամփոփում

✓ «Քրեական արդարադատության համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն հակազդում». Կոնֆերանսի ամփոփում

- «Դատապարտյալների վերասոցիալականացման հնարավորություններ թղթի վրա, բայց ոչ կյանքում»
- «Պատժել պետք չէ ներել որտե՞ղ է պետությունը դնում ստորակետը»
- «Մարդը բանտում և բանտից հետո. նոր ռազմավարության թիրախները»
- «Կրթությունը՝ կրկնահանցագործությունը կանխող գործիք»

Արդարադատության նախարարության, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի և Ռաուլ Վալենբերգի անվան ինստիտուտի հայաստանյան գրասենյակի կողմից ստացված հրավերների շրջանակում Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը մասնակցել է 5 քննարկման:

✓ Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր՝ 2023-2026 թվականների ռազմավարության նախագիծը ներկայացվեց հանրային քննարկման

✓ Տեղի ունեցավ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարության նախագծի հերթական քննարկումը

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը ներկայացրել է ռազմավարության նպատակների և ուղղությունների վերաբերյալ կազմակերպության արձանագրած խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները:

Քրեակատարողական ոլորտում վերապատրաստումներ իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ հանդիպում

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը կարևորել է նախաձեռնությունը՝ նշելով, որ այն կնպաստի հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստման ծրագրերի կայունությանը և շարունակականության ապահովմանը:

Պրոբացիայի ծառայության և այլ պետական հաստատությունների ու շահագրգիռ կողմերի միջև միջգերատեսչական և միջառարկայական համագործակցության վերաբերյալ աշխատաժողովը

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանի առաջարկությունները վերաբերել են պրոբացիայի շահառուների կրթության և աշխատանքի կազմակերպման հարցերում միջգերատեսչական և միջառարկայական համագործակցության կարևորությանը:

Ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման կարիքների վերաբերյալ կլոր-սեղան քննարկում

Միջոցառման նպատակն էր հասցեագրել իրավախախտների վերաինտեգրման խնդիրը հասարակության մեջ վերասոցիալականացման և վերականգնողական ծրագրերի միջոցով:

Ընդլայնվել է հանրային քննարկումների շրջանակը

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտին առնչվող խնդիրները հանրայնացնելու և դրանց լայն քննարկումն ապահովելու նպատակով Կազմակերպությունը թեմատիկ մեդիա քննարկումներ է իրականացրել, որոնց նպատակը պետության հետ երկխոսություն սկսելը և քաղաքականություն մշակողների ու որոշում կայացնողների վրա ազդեցություն գործելն է, ինչպես նաև պետական կառույցների և ազատազրկված անձանց միջև հաղորդակցության ամրապնդումը: Բացի այդ, դրանք նպաստել են, որպեսզի պատասխանատու պաշտոնյաները դիրքորոշում արտահայտեն բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ և պարտավորություն ստանձնեն դրանց կարգավորման ուղղությամբ:

Դատապարտյալների վերասոցիալականացման ուղղությամբ պետությունն էական քայլեր է ձեռնարկում, սակայն դատապարտյալները բարձրաձայնում են, որ այդ աշխատանքը, պետության կողմից ձեռնարկված քայլերը և իրենց ձեռքբերումները պատշաճ ձևով չեն արժևորվում դատարանների և դատախազության կողմից այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են պայմանական վաղաժամկետ ազատումը, անվտանգության գոտիների և դրանց պայմանների փոփոխությունը, խրախուսանքների տրամադրումը: Այս առումով մտահոգիչ է հատկապես ցմահ դատապարտյալների վիճակը:

2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15

- «Դատապարտյալների վերասոցիալականացման հնարավորություններ թղթի վրա, բայց ոչ կյանքում»

Քննարկման վերաբերյալ ամփոփիչ հոդվածներ են հրապարակվել Կազմակերպության կայքում: Քննարկումը լուսաբանել են Հանրային ռադիոն, Առաջին ալիքը և Ազատ լուրերը:

- «Խոչընդոտ՝ խցից հանրային կյանք ճանապարհին. ինչո՞ւ են կրթվում դատապարտյալները»
- Դատապարտյալների վերասոցիալականացման պետական ծրագրերը արդյունքներ և դժգոհություն
- Դատապարտյալների վերասոցիալականացման հնարավորություններ թղթի վրա, բայց ոչ կյանքում

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13

«Պատժել պետք չէ ներել որտե՞ղ է պետությունը դնում ստորակետը»

Քննարկման վերաբերյալ ամփոփիչ հոդված է հրապարակվել Կազմակերպության կայքում: Քննարկումը լուսաբանել են Հանրային ռադիոն և Ազատ լուրերը:

Քրեակատարողական օրենսգրքի բարեփոխումները չեն բարեփոխում ցմահ դատապարտյալների կյանքը

Դատաիրավական համակարգում դեռ բարեփոխումների կարիք կա

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2023-2026 թվականների նոր ռազմավարությամբ նախատեսվում է էական փոփոխություններ կատարել քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության ենթակառուցվածքների արդիականացման, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի օրենսդրության բարեփոխման, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների շարունակական կատարելագործման և մի շարք այլ ուղղություններով: Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր ռազմավարությունից բխող բարեփոխումներիը, դրանց նպատակայնությանը և չափելիությանը քննարկվել «Հոդված 3» ակումբում տեղի ունեցած «Մարդը բանտում և բանտից հետո. նոր ռազմավարության թիրախները» թեմայով քննարկման ժամանակ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20

«Մարդը բանտում և բանտից հետո. նոր ռազմավարության թիրախները»

Քննարկման վերաբերյալ ամփոփիչ հոդված է հրապարակվել Կազմակերպության կայքում: Քննարկումը լուսաբանել է «Առավոտ» օրաթերթը

«Մարդը բանտում և բանտից դուրս. նոր ռազմավարության թիրախները». Քննարկման ամփոփում

Մարդը բանտում և բանտից դուրս». ի՞նչ կտա ոլորտի նոր ռազմավարությունը

«Դպրություն» հաղորդաշարը պարբերաբար անդրադառնում է ազատազրկված անձանց կրթության կազմակերպման, այդ միջոցով կրկնահանցագործությունները կանխելու, ինչպես նաև հիմնարկներում պատիժ կրող անձանց սոցիալիզացիայի հարցերին: Ճիշտ է, բազմաթիվ ծրագրեր են կյանքի կոչվում, գործընթացներ են իրականացվում, բայց կրթությունը դատապարտյալներին լիարժեք հասանելի դարձնելու համար կան չլուծված խնդիրներ:

«Կրթությունը՝ կրկնահանցագործությունը կանխող գործիք»

Կազմակերպությունը նպաստել է պետական կառույցների միջև համագործակցությանը

Հաշվետու տարում կազմակերպությունը նպաստել է պետական կառույցների միջև համագործակցության խթանմանը: Արդյունավետ համագործակցության արդյունքում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչները մասնակցել են Կազմակերպության միջոցառումներին, ինչի շնորհիվ արձանագրված խնդիրների շուրջ համատեղ քննարկումներ են ծավալվել:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության արդյունքում քրեակատարողական նոր օրենսգրքում նոր կարգավորումներ են նախատեսվել, մասնավորապես հնարավոր է դարձել 19 տարեկանից բարձր ազատազրկված անձանց հանրակրթության կազմակերպումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ քննարկվում է պատժից ազատված անձանց կրթության կազմակերպման հարցը:

Ամրապնդվել է համագործակցությունը կրթական հաստատությունների հետ

2023 թվականի մարտի 16-ին Կազմակերպության և Երևանի «Հայբուսակ» համալսարանի միջև համագործակցության հուշագիր է կնքվել: Կրթական հաստատություն-հասարակական ոլորտ համագործակցությունն օգնում է միջոլորտային կապեր ստեղծել, ուսանողներին ծանոթացնել պրակտիկ խնդիրների հետ, ինչը կնպաստի նրանց մասնագիտական հետաքրքրությունների ընդլայնմանը և հմտությունների զարգացմանը, նրանց շրջանում արհեստավարժ մասնագետներ պատրաստելուն:

Համագործակցության շրջանակներում Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հանդես է եկել «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով բանախոսությամբ, որին մասնակցել են համալսարանի ուսանողները՝ ապագա բժիշկներ, իրավաբաններ և հոգեբաններ: Նրանք ծանոթացել են քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվող կրթության տեսակներին, ազատազրկված անձանց շրջանում դրանց ազդեցությանը, ինչպես նաև կրթության կազմակերպման առանձնահատկություններն, օրենսդրական բացերին և գործնականում առկա խոչընդոտներին:

Կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվել է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների ճանաչողական այցը Պրոբացիայի ծառայություն: Նրանք հանդիպել են Պրոբացիայի ծառայության պետ Գևորգ Սիմոնյանի, Վերասոցիալականացման և վերականգնողական բաժնի պետ Սիրարփի Մուղդուսյանի, Էլեկտրոնային մոնիթորինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Էդգար Ալեքսանյանի, Արարատի մարզային մարմնի պետ Արա Մինասյանի հետ, ծանոթացել Պրոբացիայի ծառայության հիմնական գործառույթներին, նշված բաժինների շրջանակներում շահառուների հետ տարվող աշխատանքներին և Արարատի մասնագիտական ուսուցման կենտրոնի գործառույթներին:

- Համագործակցության հուշագիր՝ Երևանի «Հայբուսակ» համալսարանի հետ
- Երևանի «Հայբուսակ» համալսարանում տեղի ունեցավ «Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայով բանախոսություն
- «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ Երևանի «Հայբուսակ» համալսարանի ներկայացուցիչներն այցելեցին ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն

Կազմակերպությունը շարունակել է ակտիվ համագործակցությունը Եվրասիա միջազգային համալսարանի հետ: 2023 թվականի փետրվարի 28-ին նախաձեռնել է համալսարանի դասախոսական կազմի և ուսանողների ճանաչողական այցը «Արմավիր» ՔԿՀ, ինչը լավագույնս ամրապնդել է համագործակցության նպատակները՝ զարգացնել համալսարանի իրավագիտության ամբիոնի ուսանողների գործնական հմտությունները և գիտելիքները: Հյուրերը շրջայց են կատարել հիմնարկում՝ ծանոթանալով շենքային պայմաններին, ազատազրկված անձանց պահման պայմաններին, տեսակապի, կարճատև տեսակցության և քննչական գործողությունների իրականացման համար նախատեսված սենյակներին, հոգևոր անկյուններին, ազատազրկված անձանց զբոսանքի կազմակերպման պայմաններին, ինչպես նաև ազատազրկված անձանց կրթության կազմակերպման հնարավորություններին՝ ուսումնական սենյակներ, կավագործության սենյակ, գրադարան, դպրոց, որտեղ ներկայումս կազմակերպվում է 19 տարեկանից բարձր անձանց հանրակրթությունը: Համալսարանի ռեկտորն առաջարկել է ուսումնասիրել ազատազրկված անձանց շրջանում մասնագիտությունների հետ կապված նախասիրությունները և դրանք ներկայացնել համալսարանին, ինչը կօգնի առավել հասցեական աշխատել:

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ Եվրասիա միջազգային համալսարանի ներկայացուցիչներն այցելեցին ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ

Հրապարակվել է քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բուժաշխատողների համար նախատեսված ձեռնարկը

✓ Ձեռնարկ քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բուժաշխատողների համար

2023 թվականին հրապարակվել է քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բուժաշխատողների համար նախատեսված ձեռնարկը, որը կարևոր տեղեկատվական աղբյուր է:

- Այն ներառում է սեռականության, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ համապարփակ եզրույթների բառարան: ` համապատասխան սահմանումներով ու բացատրություններով:
- Ներկայացնում է հոգեբանների էթիկական սկզբունքները, բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնները և քրեակատարողական հիմնարկների աշխատողների էթիկական սկզբունքները:
- Տեղեկատվություն է պարունակում ազատազրկված ԼԳԲՏ անձանց տրամադրվող սոցիալ-հոգեբանական, առողջապահական ծառայությունների, ազատազրկված տրանս անձանց վերաբերյալ:
- Ներկայացնում է քրեակատարողական հիմնարկներում առկա սեռական բռնության և շահագործման դրսևորումները, գենդերային բռնությունը և վերջինիս տեսակները, գենդերազգայուն միջամտության սկզբունքները և առանձնահատկությունները քրեակատարողական հիմնարկներում:
- Ամփոփ տեղեկատվություն է ներառում սոցիալական աշխատանքի, այդ թվում՝ իրավախախտում կատարած անձանց հետ տարվող սոցիալական աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Անդրադարձ է կատարում ՄԻԱՎ վարակին, վերջինիս փոխանցման ուղիներին և փոխանցմանը նպաստող գործոններին, բուժմանը, ՄԻԱՎ-ի նախա- և հետկոնտակտային կանխարգելմանը:
- Հակիրճ տեղեկատվություն է փոխանցում բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների և դրանց փոխանցման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ձեռնարկը հնարավորություն է տալիս քրեակատարողական հիմնարկների ոչ միայն հոգեբաններին, սոցիալական աշխատողներին և բուժաշխատողներին, այլև մյուս աշխատակիցներին հասկանալու և վերանայելու վերը նշված թեմաների վերաբերյալ իրենց գիտելիքները, տեղեկատվությունն ու պատկերացումները՝ առավել որակյալ ծառայություններ մատուցելու և էթիկական նորմերին համապատասխան մասնագիտական գործունեություն ծավալելու նպատակով:

Ձեռնարկի 1-ական օրինակներ փոխանցվել են Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական բժշկության կենտրոնին և կենտրոնի՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված ստորաբաժանումներին, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններին:

Ձեռնարկը փոխանցելու նպատակով Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հանդիպումներ է ունեցել Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրեն Կամո Մանուկյանի և Քրեակատարողական ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի հետ:

✓ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ Սերգեյ Ատոմյանն ընդունել է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ Նարե Հովհաննիսյանին

Ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքները ներկայացվել են ամանորյա տոնավաճառում

Տարին ամփոփվեց Իմփաքթ Հաբ Երևանի կազմակերպած ամանորյա տոնավաճառին մասնակցությամբ, որը տեղի ունեցավ 2023 թվականի դեկտեմբերի 16-ին: Ներկայացվել են 1 նախկին ցմահ դատապարտյալի, «Աբովյան», «Արմավիր», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների 9 դատապարտյալի (նրանցից 2-ը կին են, 7-ը՝ տղամարդ, որոնցից 6-ը՝ ցմահ դատապարտյալ) և 1 կալանավորված անչափահաս տղայի փայտից, կավից և այլ նյութերից պատրաստված ստեղծագործական աշխատանքները՝ զարդատուփեր, մոմակալներ, կենցաղային իրեր, ժամացույցներ և այլ հուշանվերներ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում պատրաստված հայկական գաթա:

Ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքները տոնավաճառի ներկայացնելն աննախադեպ իրադարձություն էր: Դա նախ և առաջ խրախուսում է ստեղծագործող անձանց, որպեսզի նրանք քրեակատարողական հիմնարկներում շարունակեն ներգրավված մնալ գեղագիտական կրթության մեջ: Բացի այդ, տոնավաճառին մասնակցել են տարբեր սկսնակ բիզնեսներ և սոցիալական ձեռներեցներ:

Ստեղծագործական աշխատանքների մեջ ներգրավվելով՝ ազատազրկված անձինք արդյունավետ գործունեությամբ զբաղվելու հնարավորություն են ունենում, ինչն ամրապնդում է իրենց ունեցած հմտություններով գումար վաստակելու ձգտումը: Տոնավաճառին ներկայացված աշխատանքների գները սահմանվել են հեղինակների կողմից, և ստացված հասույթը փոխանցվել է նրանց: Նրանք այդ գումարները փոխանցել են երեխաների խնամքի հաստատություններին և զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող տարբեր կազմակերպությունների՝ փորձելով այդկերպ օգտակար լինել հասարակությանը: Կան անձինք, ովքեր գումարը փոխանցել են իրենց՝ սոցիալապես անապահով ընտանիքներին: Շատ դատապարտյալներ ունեն քաղաքացիական հայցեր, բայց գումար չունենալու պատճառով չեն կարողանում դրանք վճարել: Հետևաբար ոմանք իրենց աշխատանքների վաճառքից ստացված գումարն ուղղում են քաղաքացիական հայցի վճարմանը: Կան նաև անձինք, ովքեր ստեղծագործական նոր աշխատանքներ կատարելու նպատակով հումք են ձեռք բերել այդ գումարով:

«Ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքները ներկայացվել են ամանորյա տոնավաճառում»

Տոնավաճառը լուսաբանել են Հանրային ռադիոն և «Առավոտ» օրաթերթը:

Հանրային ռադիո. Քո ձայնը

«Եթե դատապարտյալը գիտակցում է, որ իրեն սպասում են, ինքը պիտանի է դրսում, կարող է վերադառնալ հասարակություն և անել դա իր աշխատանքով, արդեն մոտիվացված դուրս կգա ՔԿՀ-ից»

«Դատապարտյալներն իրենց աշխատանքների վաճառքից ստացած գումարները փոխանցել էին երեխաների խնամքի հաստատություններին և զինվորական հաշմանդամություն ունեցողների հարցերով զբաղվող կազմակերպություններին»

Ամրապնդվել է լրատվամիջոցների հետ համագործակցությունը

Կազմակերպության գործունեությունը և իրականացրած ծրագրերը, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների վերաբերյալ վերջինիս արձանագրած խնդիրները լրատվամիջոցների կողմից լուսաբանվել են նաև հաշվետու տարում: Դա հնարավորություն է ընձեռել բարձրաձայնել ազատազրկված անձանց խնդիրների մասին, ինչպես նաև տեսանելի դարձնել այն փոփոխությունները, որոնք կատարվում են քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում: Լրատվամիջոցների հետ աշխատանքի շնորհիվ կազմակերպությունը հանրության շրջանում ընկալվում է որպես ազատազրկված անձանց խնդիրներով զբաղվող կառույց:

Հաշվետու տարում շարունակվել է կայուն համագործակցությունն Առաջին ալիքի, Հանրային ռադիոյի, Ազատ լուրերի, «Առավոտ» օրաթերթի, Epress.am-ի, Ալիք Մեդիայի, Factor TV-ի, Բուն TV-ի, disabilityinfo.am-ի և Մեդիա կենտրոնի հետ:

Մեդիա հրապարակումները լուսաբանել են հետևյալ հարցերը՝ ազատազրկված անձանց կրթության կազմակերպում, հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց խնդիրներ, կորոնավիրուսային հիվանդության ազդեցությունը դատապարտված և կալանավորված կանանց իրավունքների վրա, ազատազրկված անձանց վերասոցիալականացման գործընթաց, պայմանական վաղաժամկետ ազատում, անվտանգության գոտիների և դրանց պայմանների փոփոխություն, ազատազրկված անձանց ստեղծագործական աշխատանքներ և այլն:

- Բուն զրույց.Քաղաքականություններ
- Նայիր աչքերիս մեջ. Դատ ու դատաստան
- disabilityinfo.am
  «Հաշմանդամություն ունեցող ազատազրկվածներին հիմնականում օգնում են միայն խցակիցները»
- Epress.am
  «Բանտից ազատվողներին փող է հասնում, բայց «պետք է հիմնավորեն»

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

+374 55 155 300

info@prisoninitiatives.am

www.prisoninitiatives.am

https://www.facebook.com/legalinitiativesngo/

https://www.youtube.com/@prison-initiatives-2022

https://twitter.com/@initiatives_ngo

https://t.me/legalinitiatives